


Կուսակցությունները և ժամանակակից իրողությունները

Սարգսյան Սուրեն Թ.

ս.գ.դ., պրոֆեսոր, առաջատար գիտաշխատող,
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0005-6171-9021>

sargsyansuren@yandex.ru

ՀՏԳ՝ 327.5; EDN: IHOMRQ

DOI: 10.58587/18292437-2025.1-62

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ ծրագիր, գլոբալիզացիա, պետականություն, գաղափարախոսություն, քաղաքական կուսակցություն, Հայկական իրականություն, սոցիալ-դեմոկրատիա, կարևորագույն գործոն, Հայկական հարցի արդարացի լուծում

Политические партии и реальность

Саргсян Сурен Т.

д.и.н., профессор, ведущий научный сотрудник, Институт истории, НАА РА (Ереван, РА)

Аннотация. В современном меняющемся мире роль политических партий постоянно растет. По сравнению с численностью населения по количеству партий Республика Армения сегодня занимает одно из первых мест в мире. Поэтому не случайно, что они стали важнейшими факторами в стране. И люди часто путаются в этом разнообразии.

Наиболее политизированные структуры политической системы любой страны объединенные вокруг одной и той же идеологии инклюзивные группы активных людей, основная цель которых – стать хозяевами власти. В армянской действительности существует ряд особенностей, связанных с партиями. Во-первых, одними из первых в мире, к тому же в условиях отсутствия государственности, армяне создали политические партии. Несмотря на то, что в своих программах они отдавали дань Социал-демократической идеологии, на практике они преследовали справедливое решение армянского вопроса.

В наши дни, когда в условиях глобализации мира и изменения мирового порядка под угрозой находится вопрос сохранения армянской идентичности и государственности, в политической жизни Армении решающую роль играют 3-4 партии.

Ключевые слова и словосочетания: программа, глобализация, государственность, идеология, политическая партия, Армянская реальность, социал-демократия, важнейший фактор, справедливое решение Армянского вопроса

Parties and modern realities

Sargsyan Suren T.

Doctor of Sciences in History, professor, Leading Researcher, NAS RA Institute of History (Yerevan, RA)

Abstract. In today's changing world, the role of political parties is constantly growing. Compared to the size of the population, the Republic of Armenia ranks among the first in the world in terms of the number of parties. Therefore, it is no coincidence that they have become the most important factors in the country. And people often get confused about this diversity.

The most politicized structures of any country's political system inclusive groups of active people united around the same ideology, whose main goal is to become masters of power. In the Armenian reality, there are a number of features related to parties. First of all, Armenians were among the first in the world to create political parties in the absence of statehood. Despite the fact that in their programs they paid tribute to the Social Democratic ideology, in practice they pursued a just solution to the Armenian issue, 3-4 parties play a crucial role in the political life of Armenia. Nowadays, when the issue of preserving the Armenian identity and statehood is under threat in the context of the globalization of the world and the changing world order.

Keywords & phrases: program, globalization, statehood, ideology, political party, Armenian reality, social democracy, the most important factor, fair solution of the Armenian question

Քաղաքական կուսակցությունները քաղաքակրթության կարևորագույն նվաճումներից են: Հայաստանի վերակախացմանը զուգընթաց կուսակցությունները մեզանում սկսեցին աստիճանաբար կարևորվել: Իսկ վերջին տարիներին վճռական գործոն են դարձել երկրի հասարակա-

կան-քաղաքական կյանքում [11]: Կուսակցությունների թվով Հայաստանի Հանրապետությունը բնակչության թվաքանակի համեմատ այսօր աշխարհում առաջնային տեղերից մեկն է գրավում: Ինչու, քանի որ դրանք իշխանության հասնելու և զանազան բարիքներից օգտվելու

իրական հնարավորություն են ընձեռում: Իսկ հասարակ ժողովուրդն այդ բազմաքանակ տիրություն հաճախ շփոթվում է: Այնինչ, իրականում գործող ու չգործող կուսակցություններն իրարից այնքան էլ չեն տարբերվում: Ավելին, միմյանցից արտագրված դրանց ծրագրերը գեղեցիկ բառերի ու գաղափարների շքահանդես են հիշեցնում: Իսկ տարիների փորձը ցույց է տալիս, որ իշխանության հասնելուց հետո բոլորն էլ գործնականում նույն կերպ են վարվում՝ բարձր ու եկամտաբեր պաշտոններում նշանակում են իրենց թիմակիցներին և սկսում են իներցիայով առաջ ընթանալ՝ շարքային քաղաքացիների մոտ առաջացնելով բազմաբնույթ հարցեր, հիմնախնդիրներ ու նաև դժգոհություններ: Հենց այդ հիմնախնդիրների լուսաբանման անհրաժեշտության գիտակցումն էլ դարձավ սույն հոդվածը գրելու պատճառը:

Կուսակցությունները¹, որոնք ցանկացած երկրի քաղաքական համակարգի ամենաքաղաքականացված կառույցներն են, յուրաքանչյուր ժողովրդավարական հասարակության գոյության և զարգացման անհրաժեշտ ու կարևոր բաղադրիչ են: Դրանք ապահովում են ոչ միայն քաղաքացիների՝ հասարակության և պետության քաղաքական կյանքին մասնակցությունը, այլ դրանով նպաստում են ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը: Ուստի, քաղաքական կուսակցությունների ազատ և արդյունավետ գործունեության իրականացման համար անհրաժեշտ իրավական նախադրյալների ստեղծումը կարևոր նախապայման է ժողովրդավարական հասարակության կայուն զարգացման համար:

Ժամանակակից ներկայացուցչական ժողովրդավարության և պառլամենտարիզմի պայմաններում դրանք կարևորագույն դերակատարներն են և հսկայական նշանակություն ունեն յուրաքանչյուր պետության և հասարակության կյանքում²: Տարբեր ժողովուրդների ու երկրների դեպքում կուսակցությունների առաջացման գործընթացները, որդեգրած հիմնական սկզբունքները և դրանց հասնելու միջոցներն զգալիորեն տարբերվում են իրարից: Բոլորին հատուկ է այն, որ բոլոր կուսակցություններն էլ ունեն են ծրագրեր, որոնք սահմանում են իրենց ռազմավարությունն ու մարտավարությունը: Հետևաբար, դիտարկելով դրանց ընդհանուր քաղաքա-

կան համակարգի համատեքստում, կարևոր է դառնում հստակեցնել և սահմանել այն կարևորագույն հատկանիշները, որոնք բնորոշ են կուսակցություններին:

Ոչ բոլոր քաղաքական կազմակերպություններն են կուսակցություններ: Հետևաբար նախ հարկավոր է սահմանել, թե որն է քաղաքական կուսակցություն հասկացության բնորոշ գծերը: Քանի որ այն իր մեջ պետք է ընդգրկի այն բոլոր կարևոր գծերն ու հատկանիշները, որոնք բնորոշ են ցանկացած քաղաքական կուսակցության, հետևապես այնքան էլ դյուրին չէ սպառնիչ պատասխան տալ այդ հարցին: Ինչպես նաև սպառնիչ ներկայացնել, թե ինչ տեղ է զբաղեցնում այն հասարակական կյանքում և քաղաքական համակարգում:

Դարերի ընթացքում կախված այն հանգամանքից, թե ովքեր են եղել դրանց ստեղծողները, ինչ տնտեսական ու քաղաքական շահեր են հետապնդել, ինչ նպատակներ են դրել իրենց առջև, կուսակցության տարբեր սահմանումներ են գործել: Ընդ որում այդ սահմանումներում գերակշռող ու առաջնային են համարվել այն հատկանիշները, որոնք ավելի հոգեհարազատ են եղել տվյալ կուսակցության գաղափարախոսությանն ու հասարակական կյանքի վերաբերյալ մոտեցումներին: Օրինակ՝ կուսակցության մարքս-լենինյան սահմանման մեջ ամենաառաջնային ու հիմնական հատկանիշներ էին համարվում դասակարգերն ու դրանց մղած սոցիալ-դասակարգային պայքարի հարցերը: Կարևոր է նկատի ունենալ նաև այն կարևոր հանգամանքը, որ ժամանակի ընթացքում կուսակցությունների հիմնական սկզբունքների և դրանց լուծման միջոցների հետ կապված դրանց բնորոշումներում ևս տեղի են ունեցել զգալի փոփոխություններ:

Կուսակցություն հասկացության սահմանումը իր մեջ պետք է ընդգրկի այն բոլոր կարևոր գծերն ու հատկանիշները, որոնք բնորոշ են ցանկացած քաղաքական կուսակցության: Այս կարգի մոտեցման դեպքում այնքան էլ դյուրին չէ սպառնիչ պատասխան տալ, թե ինչ է իրենից ներկայացնում քաղաքական կուսակցությունը որպես ինստիտուտ և թե ինչ տեղ է զբաղեցնում հասարակական կյանքում, առավել ևս հասարակության քաղաքական համակարգում: Հատկապես, որ ներկայումս աշխարհում գործում են հազարավոր կուսակցություններ, որոնք տարբերվում են կազմակերպական սկզբունքներով, սոցիալական բազայով, գաղափարախոսությամբ, գործունեության ծրագրերով ու գործառնություններով, իրենց դիրքորոշմամբ, քաղաքականությամբ և այլն: Հասկանալի է, թե ինչու բավականին դժվար է առանձնացնել այն ընդհանուր բնութագրերը, որոնք որոշում են այդ երևույթի դիմանկարը, հասարակական-քաղաքական դերն ու նշանակությունը:

¹ Լատիներենից թարգմանված «կուսակցություն» բառը նշանակում է «խումբ» կամ «մաս»: Այն առաջին անգամ օգտագործվել է հին աշխարհում: Օրինակ՝ Արիստոտելը խոսեց լեռնային շրջանների, հարթավայրերի կամ ավերի բնակիչների խնջույքների մասին: Բացի այդ, նա այս տերմինն անվանել է քաղաքական գործիչների խումբ, որոնք մտնում են կառավարչի մերձավոր շրջապատի մեջ:

² Այդ մասին են վկայում գրեթե բոլոր ժողովուրդների մոտ նշված հիմնախնդիրներին նվիրված հսկայական գրականության առկայությունը:

Կուսակցության հասկացության, դրա էության բովանդակության, սոցիալական նշանակության, տիպավորման, նաև գործառույթների որոշման հարցում առկա մի շարք բարդություններն ու դժվարությունները նկատի ունենալով՝ միանգամայն բնական և օրինաչափ է մասնագետների մոտ առկա տարատեսակ մոտեցումները: Դրանից ելնելով էլ գոյություն ունեն կուսակցության տարբեր սահմանումներ:

ա) Դրանք կայուն, հիերարխիկ կազմակերպություններ են՝ կազմված միևնույն քաղաքական համոզմունքներ ունեցող մարդկանցից, որոնք միասնաբար աշխատում են իրենց նպատակների իրականացման համար:

բ) Ժողովրդի առավել ակտիվ մասի՝ դասակարգերի կամ սոցիալական խմբերի կողմից ձևավորված կազմակերպություններ են, որոնք գլխավորապես իրենց նպատակն են համարում պայքար մղել և նվաճել քաղաքական իշխանություն:

գ) Կամավորության սկզբունքով միավորում է այս կամ այն դասակարգի սոցիալական խավերի առավել ակտիվ ներկայացուցիչներին: Կոչված է նրանց գիտակցությանը և գործունեությանը տալ նպատակամղված և կազմակերպված բնույթ և պաշտպանել այդ շահերը քաղաքական հարաբերություններում:

Ժամանակակից պայմաններում քաղաքական կուսակցություններն իրենցից ներկայացնում են ինստիտուցիոնալ կազմավորումներ, որոնք առանձնանում են մի շարք կարևոր հատկանիշներով, ինչով էլ տարբերվում են հասարակական այլ կազմակերպություններից: Մասնավորապես, քաղաքական կուսակցությունները կազմակերպությունների հիմքի վրա ստեղծված իրավական-նորմատիվ ձևակերպում ստացած որոշակի թվով մարդկանց միավորումներ են, որոնց հիմնական նպատակը պետական իշխանությունը նվաճելն է կամ էլ առնվազն իշխանության վրա ազդեցություն ունենալը:

Գիտական հարթակում քաղաքական կուսակցության սահմանման առնվազն մի քանի մոտեցումներ են առկա: Լիբերալ տեսանկյունից դա գաղափարական ասոցիացիա է: Իսկ ինստիտուցիոնալի՝ կուսակցությունը պետական համակարգում գործող կազմակերպություն է: Մինչդեռ ավանդական մոտեցումը կուսակցության սահմանումը կապում է ընտրական գործընթացի, թեկնածուների առաջխաղացման, ընտրական մրցակազմի և օրենսդիր ու գործադիր իշխանության հետամուտ լինելու հետ: Եվ վերջապես, մարքսիստական մոտեցումը քաղաքական կուսակցությանը դիտարկում է դասակարգային դիրքերի տեսանկյունից: Կուսակցությունը, այս մեկնաբանությամբ, դասա-

կարգի ամենագիտակից և ակտիվ մասն է, որի շահերը նա պաշտպանում է:

Չմանրամասնելով նշենք, որ կուսակցություն է համարվում այն քաղաքական կազմակերպությունը, որն իր մեջ ներառում է միևնույն գաղափարախոսության շուրջ համախմբված ամենակտիվ կողմնակիցներին: Սահմանում է իր հիմնականպատակը (ռազմավարություն), և դրան հասնելու միջոցները՝ (մարտավարություն): Ունի իր ներկուսակցական կանոնադրությունը, գործելու տարածքը և այլ հատկանիշներ: Մեր օրերում կուսակցություններին բնորոշ է կարևոր մի դրույթ ևս՝ մասնակցություն իշխանության համար շարունակական պայքարին: Այլ կերպ ասած՝ քաղաքական կուսակցությունը համախոհների կազմակերպված մարմին է, ովքեր աշխատում են ընտրելու պետական պաշտոնի թեկնածուներ, որոնք ներկայացնում են իրենց արժեքները քաղաքականության հարցերում: Լինում են նաև փոքր և քիչ կազմակերպված քաղաքական կուսակցություններ, որոնք նույնպես առաջադրում են պետական պաշտոնի թեկնածուներ: Նկատենք, որ նախորդ դարերում այս հայեցակարգը օգտագործվել է նաև մարդկանց մի խումբ նկարագրելու համար, որոնց ձեռքում է իշխանությունը: Եվ այն տեսքով, որով քաղաքական կուսակցությունները սովոր են փողոցում հասարակ մարդու տեսնել, նրանք սկսեցին հայտնվել 18-19-րդ դարերում՝ պառլամենտարիզմի ձևավորման ժամանակ:

Նշենք նաև, որ կուսակցությունների հանդես գալու համար անհրաժեշտ են համապատասխան պայմաններ, այսպես կոչված օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններ: Կարևոր օբյեկտիվ գործոններից է տվյալ երկրի սոցիալտնտեսական զարգացման որոշակի մակարդակի առկայությունը: Այս առումով օրինաչափ է, որ կուսակցությունները հիմնականում հանդես են եկել կապիտալիզմի ձևավորման և հաստատման ժամանակահատվածում, երբ մարդիկ՝ ունենալով ընդհանուր շահեր ու ձգտումներ, միավորվում էին տարբեր սոցիալական խմբերում: Այլ կերպ՝ կուսակցությունները հանդես են գալիս այն ժամանակ, երբ հասարակությունը ձեռք է բերում հասունության որոշակի մակարդակ, իսկ հետո էլ դառնում է տիրապետող գործոն քաղաքական կյանքում: Այսինքն, կուսակցությունները միաժամանակ հասարակության զարգացման և՛ արդյունք են, և՛ գործիք:

Կուսակցություններն անցել են ձևավորման տարբեր փուլեր: Ժամանակակից քաղաքագիտության մեջ ընդունված է քաղաքական կուսակցությունների էվոլյուցիան, որն առաջարկել է գերմանացի նշանավոր փիլիսոփա և քաղաքական տնտեսագետ Մ. Վեբերը [19]: Ըստ նրա աշխատանքի՝ կուսակցության ստեղծման

առաջին փուլը «արիստոկրատական շրջանակն» է: Չարգանալով՝ այն վերածվում է «քաղաքական ակումբի», իսկ հետո՝ «գանգվածային կուսակցության»: Ըստ Վեբերի՝ ցանկացած քաղաքական կուսակցության էական հատկանիշներն էին. Իշխանությունը խնդիրների (քաղաքական և այլ) լուծելու տեսլականին համապատասխան օգտագործելու ցանկությունը, որը բնորոշ է միայն տվյալ կուսակցությանը [16, էջեր 47-49]: Ավելացնենք, որ առաջին նման քաղաքական միավորումների մասին հիշատակումները հասնում են մինչև անտիկ ժամանակաշրջան:

Դեռևս Հին Հունաստանում կային իշխանության համար պայքար մղող խմբավորումներ: Իսկ դասական առումով կուսակցությունների ձևավորման փորձերը սկսվել են միայն 1800-ականների կեսերին: Այդ ժամանակից սկսած կուսակցությունները տարբերակվում են գաղափարային և դասակարգային առանձնահատկություններով: Օրինակ՝ եղել են սոցիալ-դեմոկրատական, մարքսիստական, լիբերալ, բանվորական, գյուղացիական, երիտասարդական և այլ կուսակցություններ: Կուսակցությունները երկրի քաղաքական կյանքի շարժիչներն են, առանց նրանց լուրջ քաղաքական գործընթացներ հնարավոր չեն: Տարբեր երկրներ ունեն կուսակցական տարբեր համակարգեր՝ միակուսակցական, երկկուսակցական և բազմակուսակցական: Կուսակցությունները հանդես են եկել տվյալ ժողովրդի համար պատմական կարևոր, բեկումնային ժամանակաշրջանում, երբ երկրի, ժողովրդի առջև ծառայած են եղել կարևոր, բարդ խնդիրներ և պաշտպանել են հասարակության որոշակի սոցիալական խավերի շահերը:

Առաջին մասսայական կուսակցությունը հանդես է եկել 1861 թ-ին Անգլիայում: Դա Լիբերալ կուսակցությունն էր [17]: 1863 թ. Գերմանիայում ստեղծվել է առաջին բանվորական կուսակցությունը [18]: Չնայած պետականության չգոյությանը, մարդկության պատմության մեջ, առաջիններից մեկը կուսակցություններ ստեղծվեցին նաև հայ ժողովրդի կողմից: 1885 թ.՝ Վան քաղաքում ձևավորվեց Արմենական, 1887 թ.՝ Ժնևում Հնչակյան, 1890 թ.՝ Թիֆլիսում Դաշնակցական կուսակցությունները:

Պետք է նշել, որ եթե պետության մեջ առկա են կուսակցություններ, դա դեռ չի նշանակում, որ դրանում նաև կուսակցական համակարգ կա: Կուսակցությունների միջև հարաբերությունները միայն այն ժամանակ են համակարգ ձևավորում, երբ այդ հարաբերությունների մեջ գտնվում որոշակի կայունություն ու կանոնակարգվածություն կա: Այլապես կարելի է խոսել լոկ այն մասին, որ կուսակցական համակարգը դեռևս կայանում է կամ արմատապես փոխում է

իր բնույթը և այլն: Օրինակ՝ ակնհայտ էր, որ Հայաստանի Հանրապետությունը ԽՍՀՄ-ի ինքնավարումից հետո բազմակուսակցական համակարգի կայացման գործընթացում շատ դժվարություններ է ունենալու: ՀՀ-ում խորհրդարանական ընտրություններին մասնակցում էին տասնյակ կուսակցությունները, որոնք բնականաբար չէին կարող քվեների մեծ տոկոս ձեռք բերել: Սակայն պետք է արձանագրել, որ աստիճանաբար ընտրություններին սկսեցին մասնակցել ավելի ու ավելի քիչ թվով կուսակցություններ [6, հոդված 3.1; 10, էջ 12]: Օրինակ՝ 2012 թվականի ԱԺ ընտրություններին մասնակցեցին ընդամենը 9 միավորումներ, որոնցից միայն 6-ը հաղթահարեցին ընտրական անցողիկ շեմը: 2017 թվականի ԱԺ ընտրություններին մասնակցեցին կրկին թվով 9-ը քաղաքական ուժեր, սակայն խորհրդարանում հայտնվեցին միայն 4-ը: Իսկ վերջին ընտրությունների արդյունքում՝ ընդամենը երեքը:

1990 թ. Անկախության հռչակագրի ընդունմամբ սկիզբ դրվեց ժողովրդավարական, իրավական համակարգի արմատավորմանը՝ նախանշելով բազմակուսակցական համակարգի ձևավորման նախադրյալները: Բազմակուսակցական համակարգի ձևավորման մեկնարկը տեղի ունեցավ ՀՀ Գերագույն խորհրդի կողմից 1991 թվականի փետրվարի 26-ին ընդունված «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» օրենքի ընդունմամբ [3, էջ 9-10], որն ամրագրում էր կուսակցությունների ձևավորման և գործունեության հիմնադրույթները: Հիշյալ օրենքով կարգավորվում էր կուսակցությունների հիմնադրումն ու գրանցումը, կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ սահմանվում էր պետական վերահսկողություն, կուսակցությանը ներկայացվում իր ֆինանսական գործունեության մասին տարեկան հաշվետվություն ներկայացնելու պահանջ: Օրենքը կարգավորում էր նաև հասարակական-քաղաքական կազմակերպությունների գործունեության կասեցման և արգելման հետ կապված հարաբերությունները¹: Իսկ 1995 թ. Սահմանադրության ընդունմամբ արդեն կուսակցությունների իրավական կարգավորումը բարձրացվեց սահմանադրական մակարդակի: Սահմանադրությամբ ՀՀ-ում ճա-

¹ «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» օրենքի ընդունումից (ընդունվել է ՀՀ Գերագույն խորհրդի կողմից 1991 թ. փետրվարի 26-ին) հետո մեկ տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում գրանցվեցին շուրջ քսան կուսակցություններ, որոնք արդեն ձևավորվել և փաստացի գործում էին մինչև օրենքի ուժի մեջ մտնելը: Հետագայում այդ օրենքում կատարվեցին մի քանի փոփոխություններ: Իսկ 2016 թ. դեկտեմբերի 16-ին ընդունվեց «Կուսակցությունների մասին» գործող սահմանադրական օրենքը, որում ևս 2019-2020 թթ. որոշ փոփոխություններ կատարվեցին: Տե՛ս [21]:

նաչվեց բազմակուսակցական համակարգ [2, հոդված 7]:

Նկատենք, որ ինչպես բազմաթիվ այլ հարցերում, կուսակցությունների դեպքում ևս հայ իրականությունում առկա են մի շարք բացառիկ իրողություններ:

1. Նախ՝ աշխարհում առաջիններից մեկը և այն էլ պետականության չգոյության պայմաններում հայերն հիմնեցին քաղաքական կուսակցություններ:

2. Օտարի տիրապետության պայմաններում ստեղծված այդ կուսակցություններն իրենց որդեգրած քաղաքական նպատակներով և ծրագրերով պատկանում էին ժամանակի առաջավոր և հեղափոխական գաղափարների կրողների թվին:

3. Եթե Հնչակյանի և Դաշնակցության գաղափարախոսությունները զգալիորեն սնվում էին համաշխարհային սոցիալ-դեմոկրատիայի անդաստանում, ապա հայ առաջին Արմենական կուսակցության գաղափարախոսությունն ու ծրագիրն ամբողջությամբ տիրող պայմանների ծնունդ էին և ազդեցություն չէին կրում որևէ այլ գաղափարախոսություններից:

4. Թեև Հնչակյան և Դաշնակցություն կուսակցությունները զգալորեն տուրք էին տալիս իրենց ձևավորման ժամանակ տարածված սոցիալ-դեմոկրատական գաղափարախոսության հիմնադրույններին և հաճախ անդրադառնում էին սոցիալ-դասակարգային խնդիրներին, սակայն իրականում հետամուտ էին ու հիմնականում ծառայում էին Հայկական հարցի արդարացի լուծմանը:

5. Եթե բացառենք Հայաստանի Առաջին հանրապետության գոյության կարճատև ժամանակահատվածը, ապա հայ ավանդական կուսակցություններն ավելի քան յոթանասուն տարի դասական առումով քաղաքական գործառույթներ չէին իրականացնում, այլ ավելի շատ զբաղված էին հայապահպանության, կրթամշակութային և այլ ազգաշահ գործունեությամբ: Այլ կերպ ասած, այդ շրջանում մեծ հաշվով դրանք քաղաքական կառույցներ էլ չէին:

6. Հայաստանի վերանկախացումից հետո ավանդական կուսակցությունները թեև գործունեություն ծավալեցին նաև Հայաստանի Հանրապետությունում, սակայն բացի Դաշնակցությունից, այդպես էլ ուժեղ քաղաքական կառույցներ չդարձան և ցայսօր իրենց գործունեությունը շարունակում են հիմնականում Սփյուռքում:

Ժամանակակից հարափոփոխ աշխարհում կուսակցությունների նախկին, հատկապես Մարքս-լենինյան սահմանումներն այլևս քննություն չեն բռնում: Խնդիրն այն է, որ մեր օրերում դասերի ու դասակարգերի նախկին բնորոշումներն էլ են արմատապես փոխվել, քանի որ աստիճանաբար դրանց միջև եղած

սահմանագծերն ավելի հեշտ անցանելի են դարձել և բավականին արագ փոփոխվում են: Մասնավորապես նոր տեխնոլոգիաների, նորագույն տնտեսվարման ձևերի և այլ համանման բնույթի բնագավառների հետ կապված մարդիկ շատ արագ հարստանում են, երբեմն էլ՝ սնանկանում: Արդյունքում երեկվա աղքատ ուսանողը մի քանի տարվա ընթացքում դառնում է հսկայական կարողությունների տեր: Օրինակներ շատ կան՝ Ֆեյսբուք սոցիալական ցանցի համահիմնադիրներից Մարկ Յուկենբերգը, Microsoft Corp.-ի գլխավոր համահիմնադիր Բիլ Գեյթսը, Amazon.com առևտրային ինտերնետ հարթակի հիմնադիր Ջոզեֆ Բեզոսը, կանադամերիկացի բիզնես մագնատ, ճարտարագետ և գյուտարար Իլոն Մասկը, հազարավոր սինգապուրցի, չինացի, ռուս, հայ նախկինում աղքատ, իսկ այսօր միլիարդատերեր և այլն: Հետո էլ արդեն տևական ժամանակ է, որ գոնե աշխարհի զարգացած երկրներում ոչ պրոլետարներ կան և ոչ էլ ընչազուրկ գյուղացիներ: Այսինքն, նոր սոցիալիստական հեղափոխությունների հնարավորությունը զրոյացել է, քանի որ դրա շարժիչ ուժերն ու պայմաններն ըստ էության այլևս չկան:

Այս գործընթացներն էլ ուղղակիորեն ազդել են նաև կուսակցությունների բնույթի և նրանց առաքելության վրա: Ու քանի որ սոցիալ-քաղաքական նախապայմաններն ու դրանց առջև ծառայած խնդիրները փոխվել են, դրա հետ կապված փոխվել են նաև կուսակցությունների բնույթն ու լուծելիք խնդիրները: Անկախ այն հանգամանքից, թե ինչ ու ինչպիսի ամպագորգոռ դարձվացքներ են օգտագործված կուսակցությունների ծրագրերում, դրանք հիմնականում հետապնդում են մեկ խնդիր՝ հասնել իշխանության: Այդ խնդիրը լուծելու համար էլ օգտագործվում են գրեթե նույն միջոցներն ու մեթոդները: Այս պարագայում գաղափարախոսական տարբերությունները կամ մարդկանց սոցիալական վիճակը այնքան էլ շատ բան չեն որոշում: Հետևաբար նույն կուսակցության մեջ կողք-կողքի են հայտնվում միանգամայն տարբեր խավերի ներկայացուցիչներ, որոնք դառնում են նույն նպատակի շուրջ համախմբված մարդկանց խումբ կամ թիմ: Ահա հենց նույն հիմնանպատակի շուրջ համախմբված և թիմային շահերով ու հոգեբանությամբ գործունեությունն է բնորոշ մերօրյա կուսակցություններին:

Ժամանակակից հարափոփոխ աշխարհում, ինչպես նաև ՀՀ-ում, առաջացած նոր սոցիալ-տնտեսական, քաղաքական, հոգեբանական, իրավական և աշխարհընկալման պայմաններում [13; 14] կարելի է կուսակցությունները սահմանել հետևյալ կերպ. Անկախ իրենց սոցիալական կարգավիճակից, հանրության մեջ զբաղեցրած

դիրքից ու հնարավորություններից, միևնույն նպատակին հասնելու շուրջ համախմբված մարդկանց խումբ, որը ձգտում է հասնել իշխանության և օգտագործել դրա լծակները սեփական հայեցողական նպատակներն իրագործելու համար:

XXI դարասկզբին աշխարհի ավելի քան 190 երկրներում հաշվվում էր 1000-ից ավելի կուսակցություն [20, էջ 9]: Նկատենք սակայն, որ մերօրյա կուսակցություններին հիմնականում առաջնորդում են թիմային շահերն ու խնդիրները: Կարևոր մի դիտարկում ևս. հատկապես գերզարգացած երկրներում արդեն տասնյակ տարիներ շարունակ իշխանության համար հիմնականում պայքարում են երկու-երեք նույն կուսակցությունները: Իհարկե, փոքր կուսակցություններ էլ են գործում, սակայն, որպես կանոն, դրանք քաղաքական դաշտում այլևս վճռական դերակատարություն չունեն և ստիպված գործում են այս կամ այն խոշոր կուսակցության թևի ներքո և սատարում են վերջինիս:

Չնչին բացառություններով Հայաստանի Հանրապետության քաղաքական դաշտում ևս նույն պատկերն է: Անկախության արշալույսին երկրում վճռական դերակատարություն ունեւ Հայոց Համագային շարժումն իր սաթելիտներով [1; 8]: Սակայն երկրում սեփականաշնորհման քողի ներքո կատարված համատարած թալանի և մի խումբ մարդկանց արագ և ապօրինի հարստացման գործառույթներից հանրությունը հիաթափվեց ՀՀ-ից [12]: Առհավատցյան 1999 թ. մայիսի 30-ի Ազգային ժողովի ընտրություններն էին, որի ընթացքում շարժումը հավաքեց ընդամենը 12559 կամ 1, 17% ձայն [5, էջ 29]: Ի դեպ բավականին աշխուժացան նաև հայ ավանդական կուսակցությունները, որոնց թեև խորհրդային իշխանությունները վտարել էին հանրապետությունից, սակայն 70 տարի նրանք ոչ միայն կարողացել էին գոյատևել սփյուռքում, այլև ավելի էին հզորացել: 1991 թ. պաշտոնական գրանցում ստանալուց հետո Հայ հեղափոխական Դաշակցությունը (ՀՅԴ), Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցությունը (ՀՌԱԿ) և Սոցիալ-Դեմոկրատական Հնչակյան կուսակցությունը (ՍԴՀԿ) սկսեցին ակտիվորեն մասնակցել ՀՀ քաղաքական կյանքին [5, էջ 29-33]: Նկատենք, որ արագ թափով ստեղծվում էին նաև նոր կուսակցություններ: Այսպես, 1992 թ. ստեղծվեց 5 նոր կուսակցություն, 1993 թ.՝ 4, 1994-1995 թթ.՝ 18 կուսակցություններ: Դրանց ընդհանուր թիվը 2003 թ. հասավ 118-ի, որոնց մեծ մասն, իհարկե, թղթի վրա: 2004 թ. դրանց թիվը 52 էր, իսկ 2005 թ.՝ 71¹:

Շուտով ՀՀ-ի գերակա դերին փոխարինելու եկավ Հայաստանի նորանկախ Հանրապետության ակունքներում կանգնած, 1990 թ. ստեղծված «Հայաստանի Հանրապետական» կուսակցությունը (ՀՀԿ): Այն սկսեց երկիրը կառավարել «Բարգավաճ Հայաստան», «Օրինաց երկիր» և ՀՅԴ կուսակցությունների հետ դաշինք կազմելով: Կարևոր դերակատարություն ունեին «Ազգային Ինքնորոշում միավորում» (ԱԻՄ) և «Սահմանադրական իրավունք միություն» (ՄԻՄ), «Ժառանգություն» և այլ կուսակցություններ [9, էջեր 54-56]: Կոալիցիոն տարբեր կազմերով և փոփոխակի հաշտություններով ՀՀԿ-ն կառավարեց երկիրը մինչև 2018 թ. «Թավշյա» հեղափոխությունը: Դրանից հետո երկրում գլխավոր դերակատար դարձավ 2015 թ. մայիսի 30-ին հիմնադրված «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը²:

Ժամանակակից աշխարհի գորբալացման և աշխարհակարգի ձևափոխման պայմաններում վտանգված է հայոց ինքնության և պետականության պահպանման հիմնահարցը: Ընտանեկան արժեքների ոչնչացումը, հասարակության և անհատի եսասիրությունն ու պարտադրված անբարո վարքագծի դրսևորման խախուսումը նպաստում են ինչպես ազգային ինքնության, այնպես էլ ազգային մշակույթների ու պետությունների ոչնչացմանը: Այս համատեքստում կուսակցությունների՝ որպես հասարակությանը դեպի նոր վերափոխումներ առաջնորդող կառույցների, դերակատարությունն ավելի է ընդգծվում: Կարևոր է նաև ազգային բարոյական հիմքերի արդիականացումը (քրիստոնեական արժեքներ, աշխարհայացք, լեզու), որոնց շնորհիվ դարեր շարունակ հայ պետականության բացակայության պայմաններում պահպանվել է ազգային ինքնությունը: Ազգային բարոյական հիմքերը ընկած են հայ ընտանեկան ավանդույթների, անհատի և ժողովրդի կողմից հայրենիքին ծառայելու արժեհամակարգում: Հայկական քաղաքակրթության բարոյական ներուժը պետք է ուղղված լինի ընդդեմ այդ համամարդկային չարիքի՝ մշակելով հայկական մշակույթի և քաղաքակրթության ռազմավարական և մարտավարական ծրագիր հայապահպանման ու պետականաշինության գործում [15]: Քաղաքակրթություններից յուրաքանչյուրն անցել է ձևավորման, զարգացման, մասնատման և անկման փուլեր: Հետևապես միանգամայն ենթադրելի է, որ վաղ թե ուշ մենք կանգնած ենք լինելու մեծ վերափոխումների առջև: Իսկ քանի որ քաղաքակրթության ներքին կազմվածքը բաղկացած է երկու մասերից՝ «ստեղծագործ

¹ Տվյալները վերցված են [4, գ. 7, թ. 1-2]:

² Այդ շրջանի մասին մեր տեսակետները կներկայացնենք հաջորդ մեր հոդվածում:

փոքրամասնություն» և մասսաներ, ապա կուսակցությունների, որոնք իրենց մեջ ներառում են հասարակության «ստեղծագործ փոքրամասնությունը», դերակատարությունն այսօր ավելի ու ավելի են կարևորվում:

Վկայակոչված աղբյուրներ և գրականություն

1. ՀԱԱ, ֆ. 4516, ց, 1, գ. 13, թ. 1, գ. 51, թ. 4-5:
2. ՀՀ Սահմանադրություն: – Ե., 1995:
3. Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.): – Ե., 1995:
4. ՀՀ Արդարադատության նախարարության կուսակցությունների, լրատվական միջոցների, հասարակական և այլ կազմակերպությունների գրանցման վարչություն, կուսակցությունների մասին ըստ տարիների տրված հաշվետվություններ, գ. 7, թ. 1-2:
5. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի երկրորդ գումարում: – Ե. 2004,
6. «Կուսակցությունների մասին» օրենք, ընդունվել է 2016 թ. դեկտեմբերի 16-ին:
7. «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» օրենք՝ ընդունվել է 1991 թ. փետրվարի 26-ին:
8. ՀՀԾ-ի ընթացիկ արխիվ, ՀՀԾ վարչության արխիվային նյութեր ՀՀԾ-ի գործունեության մասին, թղթապանակ հ. 1, թ. 1:
9. **Աբրահամյան Հ.**, Ժողովրդավարությունը և քաղաքական կուսակցությունները: – Ե., 2009:
10. **Աբրահամյան Հ.**, Խորհրդային և հետխորհրդային հասարակությունը 1945-2011թթ.: – Ե., 2011, էջ 12:
11. **Ազիզբեկյան Ռ.**, Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն: Համառոտ ակնարկ: – Ե., 1992:
12. **Հովսեփյան Ս.**, ՀՀԾ-ն և հայ ժողովրդի մեծ ողբերգությունը: – Ե., 2002:
13. **Մինասյան Է.**, Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն: – Ե., 2013:
14. **Մինասյան Է.**, Հայոց նորագույն պետականության քառորդ դարը (1991-2017) : – Ե., 2018:
15. **Պողոսյան Գ.**, Հայ հասարակությունը XXI դարասկզբին: – Ե., 2006:
16. **Սաղաթեյան Ս. Ա.**, Գերմանական սոցիոլոգիական միտքը: – Ե., 2020
17. **Автономов А. С.**, Правовая регламентация деятельности партий в капиталистических и развивающихся странах // Сов. государство и право. 1990. N 6.
18. **Гамбаров Ю. С.**, Политические партии в их прошлом и настоящем, 2-е изд. – Санкт-Петербург, 1905. – 48 с.
19. **Девяткова Р. П.** Вебер Макс. // Большая советская энциклопедия, [в 30 т.] / под ред. А. М. Прохорова, 3-е изд. – М., 1971, Т. 4, С. 348.
20. Политические партии России: история и современность, М., 2000.
21. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=78>

*Տճանա/Հանձնվել է՝ 05.01.2025
Рецензирована/Գրախոսվել է՝ 12.02.2025
Принята/Ընդունվել է՝ 19.02.2025*